ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2016**թ.** **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՌԱԶՄԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀՀ վաստակավոր շինարար Ռազմիկ Ալավերդյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ. 21 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՌԱԶՄԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ վաստակավոր շինարար, Հայաստանի պետական մրցանակի դափնեկիր Ռազմիկ Ալավերդյանը ծնվել է 1916թ. դեկտեմբերի 4-ին Երևանում:

1942թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի շինարարական ֆակուլտետը: 1951-1968թթ. եղել է Հայարդնախագիծ ինստիտուտի ճարտարապետաշինարարական բաժնի պետը, 1964թ.՝ նաև գլխավոր ճարտարապետը: Նրա գլուխգործոցը Երևանի Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի շենքն է (1966թ.), որի համար արժանացել է ԽՍՀՄ ճարտարապետության նվաճումների ստուգատեսի դափնեկրի կոչմանը (1962-1967թթ.) և ՀՀ Պետական մրցանակների (1970թ., հետմահու):

Ճարտարապետի նախագծերով Երևանում կառուցվել են Հիդրոմետ ծառայության վարչության շենքը (1953թ.), Ռելեի գործարանն ու հանրակացարանը (1956թ.), ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտը (1962թ.), Քիմկոմբինատի մշակույթի պալատը (1962թ.), Վանաձորում՝ քիմիագործների մշակույթի պալատը (1950-53թթ) և այլն: 1959-1964թթ. եղել է Հայաստանի ճարտարապետների միության վարչության պատասխանատու քարտուղարը: 1964թ. արժանացել է Հայաստանի վաստակավոր շինարարի կոչմանը:

Ռազմիկ Ալավերդյանը մահացել է 1968թ. Մոսկվայում:

2016թ. լրանում է Ռազմիկ Ալավերդյանի ծննդյան 100-ամյակը:

ՀՀ վաստակավոր շինարար Ռազմիկ Ալավերդյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ. 21 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Հայաստանի ճարտարապետների միության նախագահ Մ. Մինասյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌԱԶՄԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռազմիկ Ալավերդյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌԱԶՄԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռազմիկ Ալավերդյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ